

**Ներքին աուդիտի եզրակացությունը բանկի՝
ներքին հսկողության իրականացման նվազագույն
պայմաններին համապատասխանության վերաբերյալ**

Սույն եզրակացությունը կազմվել է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 10.07.07թ. թիվ 205-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների օրինակելի ձևերի լրացման ցուցումներ»-ի համաձայն:

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ի (այսուհետև՝ Բանկ) ներքին աուդիտի բաժինը Բանկի խորհրդի կողմից հաստատված 2024թ. տարեկան աշխատանքային ծրագրի համաձայն անցկացրել է Բանկում իրականացվող գործընթացների, ինչպես նաև մասնաճյուղերի վերստուգումներ: Այդ աշխատանքների ընթացքում ուսումնասիրվել է նաև Բանկում ներքին հսկողության համակարգի համապատասխանությունը ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանած նվազագույն պայմաններին: Վերստուգումները և դրանց շրջանակներում ընդգրկվող թեմաների ընտրանքը կատարվել է այնպես, որպեսզի բավարար հիմքեր ձևավորվեն եզրակացության համար:

Վերստուգումների արդյունքում արձանագրվել են ռիսկեր, ներքին հսկողության համակարգի խնդիրներ և թերություններ: Վերջիններիս լուծումներ տալու և/կամ հնարավոր ռիսկերն ու դրանց բացասական ազդեցության հավանականությունը նվազեցնելու նպատակով հայտնաբերված խնդիրները քննարկվել են Բանկի շահագրգիռ ստորաբաժանումների ղեկավարների և աշխատակիցների հետ, ապա ներկայացվել են Բանկում գործող հանձնաժողովների և Բանկի խորհրդի նիստերի ընթացքում: Նիստերի արդյունքում տրվել են համապատասխան հանձնարարականներ, որոշվել են պատասխանատու անձիք և սահմանվել են վերջնաժամկետներ: Հանձնարարականների կատարման ընթացքը ևս մշտապես գտնվել է Ներքին աուդիտի ուշադրության կենտրոնում:

Հիմք ընդունելով կատարված վերստուգումների և հետստուգումների արդյունքները, մեր կարծիքով Բանկի ներքին հսկողության համակարգը 2024թ. ընթացքում ընդհանուր առմամբ բավարարել է ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններ»-ի պահանջներին:

Ներքին աուդիտի տնօրեն



Ն.Մալաթյան

27.03.2025թ.